

ՎԱՐԴԱՆԱՅ ՀԱՅԿԱԶՆԻ

ՏԱՂ ԳԵՐԵՋՄԱՆԱԿԱՆ ՎԱՍՆ ՓՈԽՄԱՆ ԵՐԱՆԵԱԼ ԵՒ

ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ ԳՐԻԳՈՐԻ

ՎԿԱՅԱՍԻՐԻ

Հեղինակն որպէս և գործ իւր, Տաղ Գերեջմանական, նորոգ յայտնեալ՝ տա-
կաւին անծանօթ մնայ վարուքն և կար-
գաւ կամ աստիճանաւ, և զարմանալի
իսկ Հայկազն կոչմամբն յ' ԺԲ դարու՝ յո-
րում գրեացն, և որպէս բանիցն կարգ
ցուցանէ՝ ի սկզբան իսկ դարուն, ժա-
մանակակից գոլով ողբացելումն իւրոյ
վկայասիրին. զորոյ ըղձալի էր մեզ
լսել ի նմանէ հաւաստագոյն ինչ զկե-
նացն և զգործոց՝ քան զկրկնութիւն
ողբական տողիցն. յորս գտանին իսկ և
բառք և ասացուածք ինչ նորք և վայե-
լուչք, թէպէտ և ոճ կամ լեզու ուսմ-
կական ընտրեալ է, կամ աշխարհա-
բառ. և յայսմ երիցագոյն օրինակ ըն-
ծայի քան զն. Շնորհալի՝ ի Հանե-
լուկսն, և Լամբրոնացի՝ ի Թուղթսն,
և քան զՄխիթար Հերացի ի Բժշկա-
րանին: Ծանուցանէ մեզ սա և երկուս
մերձաժամանակ Գրիչս բանաստեղծս,
զԳագիկ և զԱտրնեբսեհ, որոց մնամբ
փափագանօք առաւել ծանօթութեան:
Օրինակ գործոյս գրեալ է ի ՉԾԵ թուա-
կանի (1306), յորմէ ընդօրինակեալն
նոր եհաս ի մեր ձեռս. զորոյ զթերու-
թիւնս ինչ նշանակեմք ի ծանօթու-
թիւնս, զի թուի ոչ բաղդատեալ ընդ
բնագրին:

Յորժամ ըզմիտքս ժողովեմ
Ու ի քըննութեան բան պարասեմ
Յանկարծ զիմոցս ¹ աղէտ յիշեմ
Յառաջ ու ի վերջ՝ զոր ճանաչեմ:
Զինչ ² Հայք էին՝ զայն յիշեմ
Ու այլ զինչ եղաք զամեն գիտեմ.
Լուր՝ ³ զանվըճար աւանդն ասեմ
Գաղտ ու թագուն, ու ի լոյս չհանեմ ⁴:

1. Յօր. զիմոց:

2. Յօր. ըիւս:

3. Այսինքն՝ լի, մայն:

4. Յօր. «» լոյս չհանեմ:

Ասի ի բերան համակ պահեմ
Զողբահամբոյր բանն արգիլեմ.
Եւ յանձն առնուլ զայն չըկարեմ
Թէ ու ի կատարն չըբովեմ:
Դարձեալ ի լուռ կալով չուժեմ
Դագար չըտայ ու ես չհամբերեմ.
Թէ ու պակաս՝ բայց զոր կարեմն
Զայն ծայրաքաղ՝ ի լուր ածեմ.
Եւ զբանաստեղծքն յորդորեմ
Հետ իմ յասելն յօժարեմ:
Յողբոց հանգէսըս հրաւիրեմ
Զմարգարէից զնօսն աւանդեմ.
Եւ զգուժաբերսն գումարեմ
Ըզձայնարկու կանայս կոչեմ.
Անդ ի Հայոց սուգ ժամանեմ
Եւ զՀոգևոր տէր աւաղեմ:
Զեկեղեցւոյ լաց ծաւալեմ
Զիւր մերկութիւնն ցուցանեմ.
Յետ գերութեանն անգին ասեմ
Տիրոջ մահովս այլ սասանեմ.
Զհովիւն և զհօտն արտասուեմ
Սակաւ մի բանք հատուցանեմ:
Թէպէտ ու այս շատ ու անտանելի
Կորուստ ահեղ անկանգնելի.
Հինն ընդ նորոյս խառն յիշի
Սկիզբն ի կատարն հասանի.
Յայս որ անճար ու անյուսալի
Ճարակ չըկայ մըխիթարի:
Բայց բանս չէ իմ բաւելի
Ոչ գիտութեանս ոյժ զօրալի.
Զամենագովն գովելի.
Կամ Տաղ ասել գերեզմանի: ¹
Մովսէս պիտէր Խորենացի
Գերթողահայրն կենդանի.
Իմաստութեամբն անչափելի
Զերգ նա հոգևոր տուն և տեղի:
Կամ յընկերացն իւր նազելի
Բանիւք հզօրքն ի հանգիսի.
Յորոց անուանցն էին յահի ²
Յունաց ճարտարքն և յերկիւղի:
Զէին կարող կալ ի գիմի
Կամ բան մի տալ պատասխանի.
Աւ այս նոքա են կարելի
Ողբերգութեամբ պատահելի.
Մեր աղետիցս աններելի
Ու անհանգունակ հասեալ ³ չարի:
Այլ նոքա չեն աստ ի միջի
Այլ յանմարմնոց դասն ի պարի.
Յաջորդ չըկայ և չերևի
Ոչ ժառանգորդ մեծն արհեստի:
Սրահքն աւեր ճեմարանի
Ճեմողքն ⁴ անհետ չեն ի միջի.
Հիմն խըլած վարժանոցի

1. Խորագիրն և այս տող յայտ առնեն զի էր
գեղեցիկ սովորութիւն նախնեաց մերոց՝ չափա-
կան բանիւ ողբս գրել վասն ննջեցելոց նշանա-
ւոր արանց, և կոչել զայն Տաղ Գերեջմանական:

2. Թուի ակնարկել ի կարկառուն Վիճաբանու-
թիւն Դաւթի և Մովսիսի ընդ Յունաց, յորում
գուն գործեալ է զմերս յաղթողս ցուցանել:

3. Յօր. հաղել:

4. Յօր. ճեմօքն:

Աթոռ չըկայ վարդապետի.
 Վարժեալքն եղեն սյան ու գերի
 Դատարկացած յամենայնի:
 Բայց էր չլիշեմ զոր 'ի մօտի
 Դեռ յերեկեան ժամանակի.
 Գագիկ պիտէր Բագրատունի ¹
 Ու Ատրնէրսէ Բագրեանդցի:
 Իւր պերճ բանիւքն էր պանծալի
 Զափովք տաղի Հոմերոսի.
 Դրուատ երգել բան տէրունի ²
 Աշխարհալոյս որդւոյն շիրմի:
 Կամ հոմանունն իւր Աբանչելի
 Փիլիսոփայն Նարեկացի.
 Զայն հանձարեղն ես ուղէի
 Եւ ինձ 'ի յօգըն կոչէի.
 Զմեր շատ աղէտըս գրէի
 Ու ապագայիցըն թողուի:
 Թէ այն որ Մեծ Հայք կոչեցաւ
 Ու 'ի Գրիստոսէ ժառանգեցաւ.
 Նորին արեամբըն գնեցաւ
 Փըրկչին խաչին հաստատեցաւ:
 Նոր Իսրայէլ անուանեցաւ
 Քան զհինըն բարձր փայլեցաւ.
 Հերձուած 'ի բաց եկաց հատաւ
 Ի մեր միջին չերեցաւ: ³
 Յամեն ազգաց որոշեցաւ
 Պարիսպ հրեղէն շուրջ պատեցաւ.
 Թող դարձեալ էր այլ քանդեցաւ ⁴
 Կամ գաղանաց կոխան տուաւ:
 Զոր մարգարէն յառաջ տեսաւ
 Յայանի կացոյց զայս խօսեցաւ.
 Այս է այգին որ տընկեցաւ
 Արմատ էառ հաստատեցաւ:
 Իւր բարունակն որ բարձրացաւ
 Լերինք 'ի հովն իւր ծածկեցաւ.
 Իւր շառաւիղն 'ի ծով հասաւ
 Ծագ 'ի ծագէ զամեն կալաւ:
 Դարձեալ տիրոջն անպիտացաւ
 Բարեկամաց յաչաց ելաւ.
 Յանկն ու պարիսպքըն քակեցաւ
 Յանցաւորացըն կըթեցաւ:
 Այնց որ խողից ապտակեցաւ
 Ու էրէ վայրի արածեցաւ.
 Մորձն ⁵ 'ի բոցոյ տապն արբեցաւ
 Ու անձրեկամայոցն ոչ տեղացաւ:
 Այսպէս և մեզ պատահեցաւ
 Երկու գիմօքդ անարգեցաւ.

1. Վասն Գագիկայ վերջնոյ (Բ) տարաբաղդ թա-
 դաւորի բազում գովութեամբ խօսին Մատթ. Ուս-
 հայեցի և հեռուողքն, հզօր լինել բանիւք և ընդ վար-
 դապետս Յունաց հակաձառել: Իսկ զԱտրնէր-
 սէնդ Բագրեանդացի փափագեմք գիտել թէ ո՞ր
 որպիսի պանծալի տաղս հոմերականս գրեալ էր.
 եթէ արդարեւ համեմատէր սքանչելւոյն Գրիգորի
 Նարեկացւոյ, սքանչելի ոմն էր և ինքն, և յոյժ
 տենչալի գիւտ գրուածոցն:

2. Յօր. արեւի:

3. Գէթ մինչև 'ի Գր. Վկայասէր կաթողիկո-
 սական աթոռն չէր բաժանեալ:

4. Ոչ միայն խանգար թուի սկիզբն տողիդ, այլ
 և բան պակաս յառաջ քան զայն:

5. Բարունակքն:

Յառաջն անյալթ երևեցաւ
 Ու այժմ յաղթեցաւ ապտակեցաւ:
 Զի բանսարկուն նախաձեցաւ
 Սկզբնաչարին սիրան ռխացաւ.
 Ու 'ի մէջն որոմըն ցանեցաւ
 Խըրձունք հըրոյ պատրաստեցաւ:
 Դրախան 'ի փուշ փոխարկեցաւ
 Ու ոստն անպիտան առադձացաւ.
 Մեղաց յանցանքն յաճախեցաւ
 Ու ընդ յաճախելն խորտակեցաւ:
 Կառքն յարմատոց տապալեցաւ
 Աթոռն 'ի բաց հոլովեցաւ.
 Արքայութիւնն անհետացաւ
 Առաջնորդի հարկ վերացաւ:
 Եղջերն իւղոյ դատարկացաւ
 Յօժանելոյ պարասեցաւ.
 Լոր արծաթոյն ժանգով ներկաւ
 Մանեակ ոսկւոյն խորտակեցաւ:
 Թագն 'ի կորուստ ընկրկեցաւ
 Ակունքն 'ի հող խառնակեցաւ.
 Զգեստ փեսային պատառեցաւ
 Փեսայն 'ի սուգ խըրթնի ցուցաւ:
 Հարսըն գերի վըտարեցաւ
 Ու 'ի զծրդերաց կողոպտեցաւ.
 Դուստր Յարեթի լքեալ թողաւ
 Որք և այրի անտիրացաւ:
 Տառապանօք աշխատեցաւ
 Զմեզ տրամուծեան որդիս ծնաւ.
 Այն որ աղատըն կոչեցաւ
 Ահեղ անուամբըն պանծացաւ:
 Այժմ զաւակօքըն գերեցաւ
 Փոքր ու ծառայ անուանեցաւ.
 Սուրն 'ի վերայ յարձակեցաւ
 Գիրկըս մաքուր արեամբ լըցաւ:
 Ի սուր 'ի սով տառապեցաւ
 Յորդեաց ¹ աղէտըն կոչեցաւ.
 Մարգարէից ողբքըն լըցաւ
 Հասաւ չարերն ու գըրեցաւ:
 Զոր յԻսրայէլ սպառնացաւ
 Յեկեղեցիս կատարեցաւ.
 Թէ առնն աւեր էր թողոց
 Զերդ տաղաւար կամ հովանոց:
 Փաւառ անմարդ երևելոց
 Հայնց զերդ այգի յետ կթելոց.
 Անդ գաղանաց յարձակելոց
 Դեք 'ի վերայ կաքաւելոց:
 Մեր դիակունքն 'ի կեր գայլոց
 Պատան չունին չեն թաղելոց.
 Զոր փախուցած չախած ² ու խոց
 Ամենն անդեղ ու անպատատոց:
 Ահա այս տանն եղև Հայոց
 Ու իւր սեփական բընակելոց.
 Զոր այլազգիք ժառանգելոց
 Ու առ հասարակ մեզ տիրելոց:
 Մեզ չէ յուսոյ տէր մնալոց
 Ոչ քաջորդի զարմօծելոց.
 Զըկայ տեղի փախուցելոց
 Յըրուեալքըս չեն ժողովելոց:
 Մեր քաւարան ³ տուն է դողոց

1. Այսինքն՝ յորդանոց:

2. Իմա՝ ջաղխեալ, բեկեալ:

3. Եկեղեցիք:

Ու աղտեղացեալ Սուրբին Սրբոց .
 Որ բնակարան էր անմարմնոց
 Ու ժողովող զգաւս արգարոց :
 Այն, ամ, ¹ գերի չէ գընկեց
 Ապականած կոխան պըղծոց .
 Ուր հրեշտակացն էր պար երգոց
 Գաբրիէլեան հնչմունք փողոց :
 Այժմ ² տեղի շանց կատաղեց
 Բարձրակառաչըն հաջեց :
 Զհայքապարուայնն ³ ձայնեց
 ԶՄահմէտ սլաւոգամ քարոզեց :
 Այն որ սուրբ լեաւն էր և ամբոց
 Այժմ ճանապարհ է անմաքրոց .
 Ի փառաց մերկ անծածկոց
 ՅԱստուածային մեծըն խնամոց :
 Զի բարկացաւ արարածոց
 Դարձոյց զերեսս ընդ մեր գործոց .
 Նըշան չըկայ քաղցրանալոց
 Ոչ աւետեաց ձայն բերեց :
 Տէրն որ ելաւ չէ դաւնալոց
 Ոչ զաւերակսն շինեց :
 Մենք փշաբեր՝ չենք տընկեց
 Ու ոչ այգի Տեառն անուանեց :
 Մեր ցանկըն չէ կարկատեց ,
 Պահողքն 'ի զուր աշխատեց .
 Զի 'ի սկզբանցն սկըսեց
 Ու ոչ 'ի կատար հասանեց :
 Ամենա որդիք ենք զԺոխոց
 Ու մեղապարտ նախատեց ⁴ .
 Զենք 'ի զընջալըն փութալոց
 Ապաշխարել ձեռն արկեց :
 Այլ որ քան զօր յաճախեց
 Ու զբարկութիւնըն շարժեց :
 Արդ չարս այս 'ի վայ աւարակեց
 Յետին հրով առչորեց :
 Պատուէր եհաս յերկնից ամպոց
 Այլ չտեղալ երկրի բուսոց .
 Հովիւն հօտիս վտարեց
 Բարձաւ նշանն յուսացեց :
 Այն որ ուղղիչ մոլորեց
 Զեռամբն օգնէր վտանգեց .
 Որ մալթանօք հանէր յողոց
 Զգարձն աղաչէր ժողովըրդոց :
 Նա արդ չմնաց տէր գերեց
 Փրկանք ու ճար անճարեց .
 Այլ փոխեցաւ 'ի դասս վերնոց
 Հանգեաւ 'ի շատ աշխատեց :
 Գնաց դուռին ըստորայնոց
 Ընդ նմանեաց պատկեց .
 Անդամքս չենք պատուաստեց
 Ու մեր խոցերս ողջանալոց :
 Այսօր չէ մարդ 'ի ցընծալ
 Ոչ յԱրարչին սէրն 'ի պանծալ .
 Այլ յամաչեւ ու 'ի կուրանալ
 Մեր տէրն չէ զսուգն 'ի բառնալ :
 Այսօր թողուըն յիրաւանալ
 Ի բաց մերժելն ու օտարանալ . ⁵

1. Թուի ձայնարկութիւն , ամ , թէ ոչ այժմ :
2. Յօր . այն :
3. Քարոզն կամ աղօթք մալթանոց՝ Ալլահ հոս է գլխի :
4. Յօր . խաբէլոյ , թերեւս խաբէլոյ :
5. Յօր . սպառաքանալ :

Եւ զսիրելի ազգս յօրանալ
 Զէ 'ի կօչել յորդիանալ :
 Այսօր խաւար սըրաից ու լալ
 Ու արտասուաց տառափն 'ի գալ .
 Երկինք 'ի լալ ու երկիր յողբալ .
 Զհայրապետին մահն 'ի սըգալ :
 Այսօր տեսուչն յանտեսանալ
 Զէ 'ի գիտելն յուրախանալ .
 Ոչ տէրունի ամպն 'ի տեղալ
 Զանձրեւ տընկոց 'ի զուարճանալ :
 Այսօր անծալ ծովն 'ի ծաւալ
 Յինքն ամփոփէ զգետն 'ի չթանալ .
 Եւ մեք ծարաւ յանզովանալ
 Պապած 'ի հուրըն տապանալ :
 Այսօր անհաս լոյսն համափայլ
 Ծածկեաց ըզջահն 'ի ստուերանալ .
 Զճաճանչն յանչեջըն մըթանալ
 Մեզ չծագել և լուսանալ :
 Այսօր արեն 'ի նուազանալ
 Շող ընդ ամպովն յարդեւանալ .
 Հողոց խաւարն 'ի բնականալ
 Դժոխք ընդ մեր մահն 'ի ցնծալ :
 Այսօր շնորհացն 'ի մերկանալ
 Հայոց հաւատն անզարգանալ .
 Զքօղն ու զպսակն 'ի մոռանալ
 Թագն յարքունի գանձն 'ի գնալ :
 Այսօր խորանն 'ի խրթնանալ
 Մեր առագոտսն անտիրանալ .
 Մեր աւազան մայրն 'ի թընդալ
 Որդիքս իւր որբ թշուառանալ :
 Այսօր աթոռ Հօրն 'ի դողալ
 Ու եկեղեցւոյ հիմըն թընդալ .
 Վէմն 'ի վիմայն հետ 'ի թաւալ
 Վերին յարկին չէն 'ի յերթալ :
 Այսօր շիրիմըն շուրջ 'ի առալ
 Այնց որ պապանց փայտն 'ի բանալ .
 Պարթեւական տունն 'ի կոծալ
 Ժառանգըն չէ յերկրի 'ի մնալ :
 Այսօր ամեն Հայք յերերեալ
 Հառաչելով 'ի հեկեկալ .
 Նահապետացն 'ի նուազանալ
 Ու երկու ազգացն աղօթանալ :
 Այսօր երկու բօթն 'ի բօթալ
 Մահու խոցերն 'ի զօրանալ .
 Պահլաւունի մեզ տէր չմնալ
 Ու Հայկազանց նուաստանալ :
 Արդ իմըս չէ սիրտ 'ի տենչալ
 Պահ մի 'ի բաց յօտարանալ .
 Թէպէտ արեան հուրն 'ի յեռալ
 Ու 'ի հայրական սէրն 'ի գըթալ :
 Բայց հըզօրին ընդգիմանալ
 Տէրս հոգեոր 'ի քաջանալ .
 Բանս 'ի մնալ ¹ յօժարանալ
 Ու 'ի յորմընցուցս ² ուժս 'ի գնալ :
 Թող , յերազի եմ շըմորած
 Թէ 'ի զարթուն յուժոյս թափած .
 Տէրս ողջունող մեզ պակասած
 Աշխարհակոծ բօթ տարածած :
 Որ յԱստուծոյ կամացն ընտրած
 Յորովայնէ մաքուր սըրբած .

1. Յօր . իհնա :
2. Թուի յարմընցուցս , յարմընցուցս :

և Եգեմայ որթոյն բերած
 չ ծառ կենաց կանգնեցուցած :
 Զմարիտ որթ չաստատած
 'ի Հօրէ մեզ մշակած .
 սածաղիկ զարդով փրթթած
 Կամհուլթիւն պաղարբերած :
 սաւորչին նման աեսած
 Գին 'ի Հայրն նմանած .
 Ծարմասոյ ոստ կանաչած
 Կոյն պտուղն ճանաչած :
 Կլուռունի մարդն մաքրած
 Կրթեական լոյսն ծագած .
 Կակնն սուրբ արձանացած
 Եկեղեցւոյ ժառանգ տուած :
 Են տիեզերացն յիմացած
 Եյոց Մեծացն յոկնած .
 ստուածային վէմն կոփած
 Եզ հաւատոյ հիմն ընկեցած :
 Կնից հաճած ու երկրի գոված
 Ըկայուլթեամբ յառաջ կոչած .
 հեղ փառացն հաղորդած
 Եծն աթոռոյ տէր կացուցած :
 Ե վէմանկեան բարձրացուցած
 Եգ Քրիստոսի թագաւորած .
 Եր հայրենի օծոյն օծած
 Եգ լոյն շնորհացն զարդարած :
 Ահարովիւ գերազանցած
 Եր խորհրդոյս խորհրդազգած .
 Եգ առաքեալսն նուիրած
 Զնանուլթեամբ հաւատարած :
 Երկրի բացող երկնից եղած
 Կականքն 'ի նա հաւատացած .
 Եգ լոյն տեսուչ աստէն կարգած
 Եր զերբ 'ի նա յանձնեցուցած :
 Երկրորդ Սահակ առ մեզ յայտնած
 Եր զանման գործով փայլած .
 Եայն նախընտիր ազգէ սերած
 Եւ սկսելոցն կատարած :
 Եստուածային բեմին ցուցած
 Եր իւր նախնեացն գրոշած .
 Եր զպրուլթիւն ոսկէգրած
 Տեսին 'ի նա էր վճարած :
 Ես առաւել փառաւորած
 Ետին դարուս յոյս պարգևած .
 Եր զպէտ ու հօտս էր ստասնած
 Եր թանոսաց ցրիւ տուած :
 Եր յաւետեաց երկրէն հանած
 Եւ օտարազգացն ծառայած .
 Եայց նա հովիւ քաջ վկայած
 Տածող 'ի վայր դաւարացած :
 Եր իւր կոչէր զորս հեռացած
 Եր իւր թարէր զորս վհատած .
 Զայր յիշել զյանցանքն անցած
 Եր զբեկուլթն ազգիս եկած :
 Զայս տառապած հօտս ու զգրած
 Զամեն պահէր ուրախացած .
 Եր իւր նման երկնաւորաց
 Եր զբուր հոգւոյն հոգեղինաց :¹
 Եր զորդ փառացն հրեղինաց
 Եր զած 'ի մէջ հոգեղինաց .
 Ես հրաւիրակ տիեզերաց

Ի յոյս վերին ճանապարհաց :
 Ես օրինակ երկրաւորաց
 Գործովք 'ի փայլ հասարակաց :
 Զերդ զարեգակն տեսողաց
 Պայծառանայր 'ի մէջ բազմաց :
 Բանն հզօր ու ընդդիմակաց
 Տեսն ահարկու հայեցողաց .
 Բարուքն հեղ մօտաւորաց
 Համբաւն ահեղ հեռաւորաց :
 Անհատ բարի յամեն դիմաց
 Այն տենչալին հասարակաց .
 Մեծն 'ի մեծաց յառաջնորդաց
 Նըշան յուսոյ քրքիստունեաց :
 Ընտրած անօթ Փրկչին կամաց
 Պիտանացու պատուին փառաց .
 Քառամանեակ գոված լանջաց
 Եկեղեցւոյ զարդարանաց :
 Ես յօրինիչ եղև կարգաց
 Կազմող ամեն վայելչանաց .
 Ի զարդ տօնից տարեկանաց
 Մեծահանդէս առնէր կարգաց :
 Կազմէր ժողով յերգսն պարաց
 Տերունական յիշատակաց .
 Եր ճառերով ներբողինաց
 Բերկրեալ զոգիւրն լսողաց :
 Պատուող ամեն սուրբ վկայաց
 Քրիստոսունակ նահատակաց .
 Ես աւակտախ մարտիրոսաց
 Յուրախուլթիւն ժողովրդաց :
 Ես Եգեմայ մեծն 'ի գետաց
 Մեզ ծովացեալ յայն վտակաց .
 Արբուցանել զծարաւ մտաց
 Յաստուածակամ քաղցր աղբերաց :
 Մտք 'ի տես գրոց շնորհաց
 Լոյսն ամենայն գիտնականաց .
 Հասեալ 'ի ծայրսն յեզերաց
 Խորհրդական խոր կտակաց :
 Զոր ցուցանէր պարզ խնդրողաց
 Զիմաստուլթիւնն սիրողաց .
 Հմուտ ճառից գիտնականաց
 Միթարիչ մենաստանաց :
 Միշտ յորդորիչ ընթերցողաց
 Ի յասպարէզ ճգնաւորաց .
 Բազմացուցիչ վանօրէաց
 Հրեշտակակերպն բանակաց :
 Եւ ինամարկու մաքուր դասաց
 Առագաստի պաշտօնայաց .¹
 Ես նորոգող սուրբ մատենաց
 Սիրող տառից պատմագրաց :
 Որ հաւաքէր 'ի տրդիտաց
 Գնէր ըզգիրս 'ի գերողաց .
 Ես ժողովէր 'ի զըրողաց
 Պահէր զբանս աշխատանաց :
 Զաստուածաբան ինքնատեսաց
 Աստուածային վարդապետաց .
 Ինքն գիտող նրբախօսաց
 Եւ խորհրդոց ուղղափառաց :
 Հազարապետ փրկչին գանձաց
 Արարչական մեծն աւանդաց .
 Ես քաւուլթիւն մեղաւորաց
 Արքայուլթեան դուրքն մեզ երաց :

1. Յօր. հրեղինաց :

1. Պաշտօնէից :

Դեղ ցուցանէր վերաւորաց
 Ըզոււացողն յանցանաց.
 Ինքն մաղթէր ընդ հայցողաց
 Ըզբաւութիւն զողջախոհաց:
 Սգակից լինէր նա սգաւորաց
 Եւ թելագիր համբերողաց.
 Նա արձակիչ մեղաւորաց
 Յըմբռմանէ չար կապանաց:
 Կապող դիւաց չարաց զօրաց
 Ու որոց նոցայն հետեւողաց.
 Աջոյն ընդդէմ մրցող չարաց
 Աներեւոյթն գազանաց:
 Յաղթող խաչիւն պարծանաց
 Յաղթէր ամեն մեքենայաց:
 Նա այսպիսի առաջնորդ էր
 Կայր հայրախնամ սիրով հովուէր.
 Ի գալարի վայրս արածէր
 Կենաց ջրօյն յանկուցանէր:
 Յեկեղեցի սուրբ ժողովէր
 Եւ կատարեալ կառուցանէր.
 Ինքն օրինակ բաղմոց լինէր
 Մաքուր վարուքն արտափայլէր:
 Զկանոյնականսն կատարէր
 Զգործն յաւարտն հասուցանէր.
 Ապա զնախնոյն զմտաւ ածէր
 Զլուսաւորչին հանդէս յիշէր:
 Որ զամենայն կիրս աւարտէր
 Եւ յանապատսն գադարէր.
 Նոյնպէս և սա զայն նախանձէր
 Ու ի մենաստանսն յօժարէր:
 Ժուժկալ անձամբ ի փորձ մըտէր
 Մարմնոց կրից պատերազմէր.
 Բազմագլուխ զօճն կոխէր
 Ներքոյ ոտիցն հնազանդէր:
 Պահապաճոյճ զինքն ճնշէր
 Ու ընդ աղօթիցն բեւեռէր.
 Զայս արտասուօք միշտ աղօթէր
 Հասարակաց զօգուտ հայցէր:
 Ապա ուխտիցն փափագէր
 Զաշխատութեան գործ համբուրէր.
 Ի հետիտա ուղևորէր
 Ու ի սուրբ քաղաքն հասանէր:
 Զտնօրինականսն տեսանէր
 Անդ ուր Փրկչին ներգործեալ էր.
 Խընդայր հոգւովն և բերկրէր
 Մարմնով յերկնի գոլ համարէր:
 Յընծայր քաղաքն և զարգարէր
 Եւ զՀայրապետ սուրբն ընդունէր.
 Որում վաղեացն¹ կարօտէր
 Այր տեսանել քրիստոսաւոր:
 Անդ գոհութիւն մատուցանէր
 Մըշտամատոյց աղօթանուէր.
 Զիւր մաքուր ձեռսն տարածէր
 Եւ արարչին փառս տալքէր:
 Նախնի սրբոցն նմանէր
 Զորոց զնախանձն յանձին բերէր.
 Սինեականն հետեւէր
 Մովսէսատիպն անդր աղօթէր.
 Զիւր յանցաւոր ազգս յիշէր
 Ու զբաւութիւն մեղաց մաղթէր.
 Զմեր արարիչն հաշտեցնէր

1. Վաղուց:

Ու զբարկութեան գալն արգիլէր:
 Նա յամենայսն յառաջէր
 Բայց առաւել ընթերցասէր.
 Միշտ ի ձեռն մատեան պահէր
 Հրեշտակաբար ձայնիւ գերգէր:¹
 Այլ ժողովէր և նորոգէր
 Պահեստ ի տուն Տեառն աւանդէր.
 Թարգմանութեանցն պարապէր
 Զամեն ազգաց գիրսն քննէր:
 Զորս պիտանի բան ճանաչէր
 Զայնս ի լեզու մեր փոխարկէր.
 Մեզ զամենայն ընդարձակէր
 Եւ զորս պակաս լըցուցանէր:
 Որդոց զանհատ շահն գանձէր
 Ու զհոգեւոր բարին յորդէր.
 Մինչ Հայք ի յայս ապաւինէր
 Ու զնա անանց յոյս իւր ունէր:
 Լըքանելոյ կարծիս չբերէր
 Թէ ի նմանէ փութով զըրկէր.
 Յանկարծ հրամանն հասանէր
 Ի խոստացեալսն ըզնա կոչէր:
 Աստուածային սիրով սիրէր
 Յարքայութիւնն հանգուցանէր.
 Եւ զմեղուցեալ ծառայքս տաէր
 Զյոյսն բառնայր, ըզմեզ խրատէր:
 Այս ժամանակ դարձի դեռ չէր
 Թէ ծերութեամբն թախանձէր.
 Կամ բաղմամեայ աւուրս ունէր
 Թէ ի վախճանն հասանէր:
 Բայց մեզ խրատ էր պատահէր
 Երեկ ցասումս որ սասանէր
 Հայոց մըթին ամպ տարածէր.
 Որ զարտասուաց հեղեղն ածէր
 Զմեզ ի կորուստ առնոյր տանէր
 Եւ զըժոխոց հաւասարէր:
 Զի թէ զնա Տէրն կոչեաց
 Անդ որ յառաջն հրաւիրեաց.
 Զմեծ պաշտօնեայն մերձաւորեաց
 Սրտին² փափաքն կատարեաց:
 Ապա ըզմեզ արտաքս ընկեաց
 Զարքայութեան դրունսն փակեաց.
 Կենաց ծառոյն կարօտ պահեաց
 Զայն տենչալին ի մէջ ծածկեաց:
 Ըզնա ի բուն սիրով սիրեաց
 Ու ի մեղաց միջոյ փոխեաց.
 Մաքուր դասին դասաւորեաց
 Անանց փառօք փառաւորեաց:
 Զւ զմեզ ողորմ արար ու առեաց
 Զայս յանցաւորքս խրատեաց.
 Յերանելի Հօրէն զըրկեաց
 Ու ի մեր փառացն կողոսպեաց:
 Ըզնա լուսովն զարգարեաց
 Պայծառափայլ զգեստաւորեաց.
 Զաստուածութեան լոյսն ծագեաց
 Որով ըզնա լուսաւորեաց:
 Բայց զմեր նշոյլն խաւարեաց
 Փառաց ըզգեստն պատառեաց.
 Զլուսոյ ճըրագն չիջանեաց
 Զմեզ ի մըթանըս մոլորեաց:
 Զնա թագաւոր կրկին օծեաց

1. Այսպէս յօրինակին:

2. Յօր. «ԲԻՒ»:

Զհրգօր գըլուխըն պսակեաց .
 Ի յարքունիսն վերաբազմեաց
 Անդ ուր տաճարն իւր նմանեաց :
 Ու զմեզ անգին ծառայ գերեաց
 Բացագլուխ գլխիվայրեաց .
 Ու հող ամեն վարսի ցանեաց
 Այն որ հոգւով սրտաբեկեաց :
 Զնա ընդ սրբոց հարանց դասեաց
 Ի Պետրոսեան գունդըն խառնեաց .
 Առաքելոց հաւասարեաց
 Զերանելի Հայրն երանեաց :
 Ու զմեզ գայլոցըն կեր ընկեաց
 Ի յապառաժըն վարսաեաց .
 Զհօտս 'ի գրախտըն չարածեաց
 Զոր սիրելեացըն պատրաստեաց :
 Ընա կենացըն կըցորդեաց
 Մահուամբ 'ի կեանքս նորոգեաց .
 Զազատն յազատ մայրն ազատեաց
 Անդ 'ի քաղաքըն կենդանեաց :
 Բայց մեզ այլ նոր գժոխք չինեաց
 Ըստ մեր մեղացըն պատժեաց .
 Յանաիրուծեան կարով խոչեաց¹
 Մահու բոցով կրկին այրեաց :
 Զնա ընկալաւ Տէրն ու գրկեաց
 Վերին Սիոնըն գըղուեաց .
 Ըզգիրկսն եբաց և ժողովեաց
 Ու զհարազատըն համբուրեաց :
 Բայց Յաբէթի դուստր աւաղեաց
 Զիւր որբուծիւնըն արատաւեաց .
 Ստորին Սիովըն հառաչեաց
 Զի անդրանիկ Տէր պակասեաց :
 Զնա 'ի վերին յարկսըն դանձեաց
 Յանապականըն մըծերեաց .
 Եւ այժմ² զըտաւ զոր և խնդրեաց
 Փուծայ 'ի սերն որ փափագեաց :
 Ի որբուծիւնս եմուտ պարեաց
 Ընդ երջանիկ ջոկսըն ասնեաց .
 Ըզտօն պայծառ նաւակատեաց
 Որ ժողովումն է հրաշալեաց :
 Իսկ մեզ ահեղ սուգ յաճախեաց
 Հատոյց ամեն ձայն աւետեաց .
 Եթող գժար բօթ լսելեաց
 Կնաց ամեն յորդոր իրաց .
 Զյոյսն ու պարծանքըն խափանեաց
 Ու անյուսուծեամբըն պատատեաց :
 Ահա քեզ բօթ այս հառաչէ
 Եկեղեցի կաթողիկէ .
 Մաքրազարդած հարսն 'ի բընէ
 Ի Հայաստան ժողովրդէ :
 Փեսայն ելաւ յառագաստէ
 Ու անդարձ գնաց 'ի տանէ .
 Այն քո հատաւ սերունդ 'ի բնէ
 Նշան 'ի մեր Լուսաւորչէ
 Մաքուր ժառանգ Սուրբն 'ի հօրէ :
 Այն մեծազարմ 'ի սկզբանէ
 Կողոստեցար այժմ 'ի զգեստէ .
 Հայրապետէն 'ի Գրիգորէ
 Մերկ 'ի փառաց պատմութեանէ :
 Եւ 'ի քղանցիցըն կրկնոցէ

Բացաւ գլուխդ 'ի պսակէ .
 Քո կռածոյ վարսդ 'ի թագէ
 Վերատեսուչն այսր այլ չհովուէ :
 Զքեզ քո որդւովքդ ոչ սփոփէ
 Ոչ յառագաստըդ մըտանէ .
 Ի սեղանոյդ անկեան պարէ
 Զորդիքս 'ի մայրըդ ժողովէ :
 Մեզ 'ի շնորհացըդ քո¹ բաշխէ
 Քրիստոսականերս պատարագէ .
 Ու քաւչապեան ըզմեզ քաւէ
 Երբ զայդ չունիս առ քեզ՝ այլ չէ :
 Ուրախութեան ձայն հատեալ է
 Համարձակի բանս ու ասէ .
 Ու զքեզ 'ի սուգս հրաւիրէ
 Դու 'ի խորոց ամ հառաչէ :
 Զխորանափեղկսըդ քակտէ
 Եւ զհարսնութեան քող պատառէ .
 Թէ զարգարանք կան՝ ճապաղէ
 Զառագաստի երգսըն փոխէ :
 Գերեզմանի ձայնիւ հնչէ
 Լացի ձայնից կափ 'ի կափէ .
 Ըզքո ատիլդ յարարոչէ²
 Այն որ կոչեաց 'ի յականէ :
 Զընաիրսն եբարձ 'ի յանուանէ
 Զքո հեղինակ Տէր 'ի տանէ .
 Տարաւ , չեթող որ ժառանգէ :
 Ահա քեզ վայ բարձր 'ի ձայնէ
 Դուստր ու ծնունդըդ որ Յաբէթէ .
 Հայոց երկիրդ որ յԱրամէ ,
 Յարեւելից բարձր 'ի կուսէ :
 Գաւառ քաջաց 'ի ծննդենէ
 Մեր հայրենի տունդ 'ի բընէ .
 Գիտես թէ զինչ քեզ պակասէ
 Կամ այսօր ով որ լըքանէ :
 Որ քո պարծանքդ էր յամենէ
 Քեզ մնացեալ ընտրած յաղգէ .
 Մաքուր զաւակ յորովայնէ
 Նշան թողած քեզ յաթոռէ :
 Նա փոխեցաւ 'ի կոչողէ
 Յահել կամացն 'ի հրամանէ .
 Ու 'ի հետ տարաւ զոր յարենէ
 Զիւր հարազատ վեհն 'ի մօրէ³ :
 Զայն նահապետ մեծն 'ի տանէ
 Զարմ 'ի քո բունըն շինողէ .
 Քաջն 'ի մեծաց քաջաց տոհմէ
 Հեղն 'ի հեղուցըն Հայկազնէ :
 Այս քեզ երկու բօթ յաճախէ
 Ու երկու կորուստըդ հասեալ է .
 Քո այժմ չկայ ոք որ տիրէ
 Պսակաւոր 'ի Հրաշայէ
 Ոչ Հայրապետ 'ի Պահլաւէ

1. Յօր . չկայր + :

2. Այսպէս յօրինակին :

3. Այս և յետագայ բանքն ցուցանեն զի 'ի նմին կամ 'ի մերձաւոր ամի մահուան Գրիգորի Վկայասիրի մեռաւ և եղբայր մի նորա իշխանաւոր , գուցէ Փիլիսպէ . զի Վասակ դուքս Անտիոքայ բազում ամօք յառաջ մեռեալ ասի , և այլք յեղբարցն կարճակեաց վախճանեալք : Իսկ ասելդ հարազատ վեհն 'ի մօրէ՝ կարծեցուցանէ ոչ զամենայն եղբարսն համամայր լինել , այլ և կին առաջին լեալ Գր . Մագիստրոսի :

1. Այսպէս յօր . Թերևս կողով կամ կալով խո-

չէ :

2. Յօր . այն :

Պարթևական յԱբրահամէ.
 Դու աւերակ մերկ ՚ի ճարէ
 Որպէս այրի յառապարէ:
 Մուտ ՚ի խաւար և տառապէ
 Կոծողք ըզքէ շրջապատէ.
 Լաց վտակօք յորդ ՚ի գետէ
 Աչօք աղբերքս արտասուէ:
 Դարձիր ՚ի ծոցըդ շարժընկէ
 Զշիրիմսդ ՚ի դիրկըդ սասանէ.
 Զոր ժողովեալ հողդ ՚ի քեզ է
 Զվրսեմական տեսարս ՚ի սեռէ:
 Զայս գոյժըս տուր և ծանակէ
 Զամենդ ՚ի լոցըս յորդորէ.
 Եւ ըզմնացեալքս յաւաղդ յիշէ
 Զուգաց զամենս ապաշաւէ:
 Զայս խօսեցայ բառարնաւոր
 Ընդ քեզ որ չես գու բանաւոր.
 Ոչ ըզգայուն կամ շնչաւոր
 Այլ անըզգայ անշնչաւոր:
 Լուր քո տեսովդ ես գուժաւոր
 Յանտիրութեան զերդ սրգաւոր.
 Այս բօթըս չէ ինձ մերձաւոր
 Սուգս ու կսկիծըս մօտաւոր:
 Ես ողբացի յոյժ զօրաւոր
 Սակաւ բանիւքս իմ թախծաւոր.
 Այս այժմ հանուրց տարածաւոր
 Ուր կը բանի գործ մըտաւոր:
 Ու ես առաւել կսկծաւոր
 Եմ իմ հարանցն՝ որք միաւոր.
 Այն որ ծնողն էր մարմնաւոր
 Ու որ յոյս ու տէր էր հոգեւոր:
 Այն հարազատըն փառաւոր
 Աստէն ՚ի սէրն գթաւոր.
 Ու անդ գնալովըն տենչաւոր
 Մինն ընդ միոյն հեան ուղեւոր:
 Տէրն յառաջէր վստահաւոր
 Յարբայութիւնն աթոռաւոր.
 Եղբայրն ՚ի հետ փափաղաւոր
 Հանգչիլ թեօքն հովանաւոր:
 Նոքա աստէն չեն գէհաւոր
 Իւրաքանչիւր փառք զըլաւոր.
 Այն արքունիք¹ մեծ ու ահաւոր
 Որ տիեզերացն էր գլխաւոր:
 Արդ յամենէ նուաստաւոր
 Կացին հարկով պատրաստաւոր.
 Տէրն պանդուխտ թափառաւոր
 Ի հայրենեաց անտեղաւոր:
 Շրջէր յերկրի անփառաւոր
 Հանգիստ չունէր նմանաւոր.
 Զէր տէրունի տուն գահաւոր
 Ոչ պետական պսակաւոր:
 Նա ՚ի հինիցն արգելաւոր
 Զերդ յօթեան անկամաւոր.
 Ու նոյն հիւանդ և խօթաւոր
 Զուեաց աստեացս անպարտաւոր:
 Ասացին թէ անդ զետեղաւոր
 Օտար հողով օտարաւոր².
 Զիս վայ թէ գու իմ թագաւոր
 Աստուածային Տէր հոգեւոր:
 Յայդ գերեզմանդ անձահաւոր

1. Յօր. անարգ ունիւ:

2. Յօր. օրանաւոր:

Շիրիմ չունիս պատշաճաւոր.
 Այդ հողըդ չէր արժանաւոր
 Ծածկել զլոյսդ արփիաւոր:
 Ոչ չէնդ անշարժ և բնաւոր
 Այլ քակելոց ապստակաւոր.
 Միտք իմ այսու թշուառաւոր
 Ու ես այդ խոցովդ եմ վիրաւոր:
 Թէպէտ քեզ չէ փոյթ երկրաւոր
 Փառք ՚ի մտացըս մարմնաւոր.
 Դու ՚ի մարմնի ես երկրաւոր
 Ու այժմ յանմարմինորն դասաւոր:
 Ընդ զօրապետսն զօրաւոր
 Երրորդութեան նպաստաւոր.
 Քահոյս ունիս քեզ հրաշաւոր
 Որ չէ ական մեր տեսաւոր:
 Հանգչիս անանց մնացաւոր
 Փառօքդ որ չէ վախճանաւոր.
 Արդ քո անչափ դրուատանի
 Գովեսա¹ անհատ ու անծայրելի:
 Որ չէ մըտացս իմ կարելի
 Ըզքեզ նման ներբողելի.
 Ու ոչ երբ երկիր այլ նորոգի
 Ազգաց ամեն քերթողանի:
 Կարծեմ թէ չեն դեռ բաւելի
 Զքո գովդ ՚ի լոյս ցուցանելի.
 Ոչ զմեր զրկիլս ողորմելի
 Ըստ արժանեացս աշխարելի.
 Զինչ որ եղաք որք ու գերի
 Անտիրացաք անգնելի²:

Բայց զայս ընկալ սիրող բանի
 Զտիմարաշար բանքս ընծայի.
 Զոր յաղթանակ քեզ հիւսեցի
 Պսակ կամ ոստ՝ և մատուցի:
 Յաղթատ մտաց գտնձէ հանի
 Քեզ պատարագ յառաջ բերի.
 Քո սուրբ թաղմանըդ խնկելի
 Կնդրուկ անուշ պատրաստեցի:
 Թէպէտ նարգեան իւղ չունէի
 Բայց օծանել զքեզ ջանացի.
 Հէքըս կալայ զաչքս ՚ի դիտի
 Հեռաստանէ ես հայելի:
 Զքեզ չտեսայ ՚ի պսակի
 Փեսայութեան յօրն ահեղի.
 Ինչ օծեցար դու կրկնակի
 Զերկրորդ օծումըդ Յիսուսի:
 Զեմ համբուրել զաջդ արքայի
 Քո ՚ի վերջին մեծն ողջունի.
 Ու ոչ յոտաց ՚ի հրահանգի
 Հարկեր առնել³ քեզ տէրունի:
 Տեսոյդ չեղայ քո արժանի
 Մահարձանիդ պատահեցի.
 Ըզքո յետին հարկ հատուցի
 Գերեզմանի քար կոփեցի:
 Քերթողական լաց շարեցի
 Քեզ կափարիչ հաստատեցի.
 Ու ես նոյն կարօտըս մընացի
 Ու այլ ոչ տեսոյդ ՚ի հրաշալի:
 Վայ թէ անդէն հայնց⁴ պատահի

1. Յօր. գովէս:

2. Քուցէ անխնայելի:

3. Յօր. հալէր յառնել:

4. Յօր. այն:

Ինչ՞ որ 'ի քէն լնիմ հեռի.
 Ըստ իմ մեղացն պատժի
 Յամբաւ բարւոյն արտաքսելի:
 Այժմ՝ աղաչեմ արտասուելի
 Զերդ յանդիման փափագելի.
 Մի մոռանաս քաղցր ու բարի
 Զիս 'ի կամացըդ տենչալի:
 Դու յետ մահու ես կենդանի
 Հայիս յամեն ձեր սիրելի.
 Գլթա և յիս, հայր գթալի
 Հայցեա փրկել յասանուորի:
 Քուեա զյանցանքս յանցաւորի
 Սուրբ մաղթանօքդ աղերսալի.
 Խառնեա 'ի հօտ պատարագի
 Զորս կացուցես Տեառն առաջի:
 Ու ասես մանկունս քեզ պանծալի
 Զթաուցեալ յառաջն Քրիստոսի.
 Յորժամ փառօքըն հայրենի
 Յարեւելց ահեղ փայլի:

Գայ 'ի հանդէս դատաստանի
 Բազմի դատել զգործս ամենի.
 Դու 'ի պայծառ մեծ յաթոռի
 Ընդ Պետրոսեան գունդն 'ի տօնի:
 Երգես ըզփառս արարողի
 Եւ զօրհնութիւնս սքանչելի.
 Ո՛վ թէ լսել զայն կարէի
 Ասել, Ամէն, և եղիցի
 Այժմ և յապա անդրաւելի:

Միանգամայն տունք յղդ¹:
 Ի թուականին ՇԾՆ եղև փոխումն սրբոյ Հայրապետիս²:

1. Պակասեն ուրեմն յօրինակէս երկու տունք որ է չորս տող:

2. Յօրինակին ՇԾԷ գրեալ էր, որ է 1108. այլ ստոյգն թուի ոչ ՇԾՆ այլ ՇԾԴ, 1105, յաւանանային եղանակի:

ԵՐԳ ԱԶԳԱՅԻՆ

Հայ եղվրնէկ¹, գարուն էր, եկաւ աշուն.

Հայ եղվրնէկ, էտ ինչ խտար քու ձէն անուշ էր
 իմ շատ խոցերուն:

Հայ եղվրնէկ, մեռնիմ էտ քու նշխուն տօտերուն:

Հայ եղվրնէկ, էտ ինչ շատ մարաղ էր

Հայ եղվրնէկ, էտ ինչ խտար
 Զքու թևեր Աստուած նշխուն է ստեղծի,
 Որ իսան հաւներ է:

Հայ եղվրնէկ, էտ ինչ խտար անուշ էր քու ձէն,

Որ կ'օլորտէր սարերն ու ձորեր.

Հայ եղվրնէկ, էտ ինչ խորոտիկ թօշիկ մ'ունիս:

Հայ եղվրնէկ, մեռնիմ քո նշխուն աշվրներուն.

Հայ եղվրնէկ, էտ ինչ շատ խոցեր

Ունիս դու մէջ քու սրբտին:

1 Աղաւնեակ: